Իսկ Յուսիկ անխռով՝ ամենայն հանդարտութեամբ կ'ըսէր.

— Խնդրեմ, իշխանուհի, այսպէս մի՛ շփոթիք, ես ամէն օր կը նայիմ, ամօթի բան չի կայ, ինք շատ գոհ է, շատ էլ բարեկամ ենք իրարու, եւ շատ սիրով…

— Լռէ՛, յիմար, ինք քեզնէ շատ գո՞հ է, կը սխալիս, ինչպէ՞ս կարելի է քեզնէ գոհ լինիլ, երբ երկու տարի առաջ իւր զօրաց ալիւրի եւ գարիի ստակը չես վճարած, եւ վաճառականք, որ ինձ խնդրագիր տուին, նոյնպէս Գրիգորի գանգտեր են, այս ամօթ չէ՞, որ մարդիկը զօրավարին կնիքը իւր երեսին նետեն:

— Այո՛, իշխանուհի, շատ ամօթ բան է, այդ անպիտանները ես լաւ կը ճանչեմ, յանցանքը զօրավարին չէ, այլ այդ գողերուն, այդ աւազակներուն, որ զինք խաբէր են, մէկին տեղ երկուք կ'ուզեն արնուլ… դուք հոգ մ'ընէք, իշխանուհի, նոքա կը կ'ակղնան, ես գործը կարգի կը դնեմ, եւ այնպէս որ ոչ ոք ձեր ազնուութիւնը չի նեղէ: Դուք, իշխանուհի, լաւ-լաւ կառավարել գիտէք, ամէն սիրտ շահիլ գիտէք, մեծին, պզտիկին, իշխանին եւ գիւղացիին տեղին խստութիւն, տեղին քաղցրութիւն գործածել գիտէք. բայց եթէ կը ներէք ըսել, ձեր հաշիւը, ձեր ծախքը չափաւորել չէք գիտէր:

— Այս ի՞նչ կնշանակէ,— կ'ըսէր Սէթայ բարկութեան ծիծաղով,— կ'երեւայ թեւ դու հիմա զիս կ'ամբաստանես. ես իմ հաշիւս չեմ գիտէր, հաշիւ տուած ունի՞ս, որ գիտնամ:

— Կը ներէք, իշխանուհի,— ըսաւ Յուսիկ իւր քաղցր ժպիտով,— այդ նաեւ հաշիւ է:

— Ինչպէ՞ս,— ըսաւ Սէթայ այս անդամ կատարեալ բարկութեամբ:

— Խնդրեմ, կիրք մ'ելնէք, իշխանուհի: Ձեր հաշիւը ինչչափ չդիանաք եւ չիմանաք, այնչափ օգտակար է ձեզ համար:

— Այս խօսքերով կ'իմացնես թէ գանձիդ վիճակը շատ լաւ է, միայն կը վախես թէ ես, որ իմանամ, աւելորդ ծախքեր կ'ընեմ, ուստի ինձմէ նաեւ պէտք կը տեսնես ծածկելու:

— Դուք շատ խելօք տիկին էք: Սաբա թագուհիի պէս, որ Սողոմոնի հարստութիւնը լսելով…